



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ N 7

Հեռ. 060650035

Կայք gegharkunik.mtad.am

Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/2715  
22 / 04 / 2020թ.

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՐԱԳՐՈՂ  
ՍԵՂԱ ՀԵՐԳՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հերզնյան

Ի պատասխան ՀՀ Գեղարքունիքի մարզպետին հասցեագրված Ձեր հարցմանը հայտնում եմ, որ 2010 թվականի հունիսի 24-ի «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը ընդգրկվել են համայնքների վարչական սահմաններում:

ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրում են համայնքների ղեկավարները:

Միաժամանակ հայտնում եմ, որ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի վարձակալական պայմանագրերի պատճեններ կարող են Ձեզ տրամադրվել համապատասխան համայնքների ղեկավարների կողմից:

22.04.2020

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հողաշինարարության  
և հողօգտագործման  
բաժին. Մ. Ղուրջուղյան  
Հեռ. 060650611